

Ի՞նչ է Հրապարակային Սակարկությունը



41 ՀԱՐՑ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

փետրվար, 2005 թ.
Երևան, Հայաստան



USAID/ARMENIA COMMERCIAL LAW AND ECONOMIC REGULATION PROGRAM

ԱՄՆ Սիցազգային Զարգացման Գործակալության
Առևտրային Իրավունքի և Տնտեսական Կարգավորման Ծրագիր

ԾԱՆՈՒՅԹՈՒՄ

Այս իրապարակման մեջ հեղինակների արտահայտած տեսակետները միշտ չեն որ
արտացոլում են ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության կամ ԱՄՆ
կառավարության տեսակետները

1 փետրվարի, 2005թ.

Այս հրապարակումը պատրաստվել է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության Առևտրային իրավունքի և տնտեսական կարգավորման ծրագրի կողմից: Հրապարակման վրա աշխատել են՝

Արտեմ Նազարյանը՝ ԱՄՆ ՄԶԳ-Առևտրային իրավունքի և տնտեսական կարգավորման ծրագրի ավագ իրավախորհրդատու

Արծրուն Միրզոյանը՝ Հայաստանի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավաբանների ասոցիացիայի խորհրդի անդամ

Արմեն Արովյանը՝ Հայաստանի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավաբանների ասոցիացիայի փորձագետ



Հյաստանի Հանրապետությունում, ազատ շուկայական տնտեսության զարգացման ներկա փուլում, կարևոր նշանակություն ունեցած “Հրապարակային սակարգությունների մասին” ՀՀ օրենքի ընդունումը:

Օրենքը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի դրույթներին համապատասխան սահմանեց հրապարակային աճուրդների միջոցով գույքի, գույքային իրավունքների, մտավոր գործունեության արդյունքների և դրանց նկատմամբ իրավունքների իրացման, ինչպես նաև հրապարակային մրցույթների կազմակերպման հետ կապված հարաբերությունները:

Օրենքը կանոնակարգեց նաև դատական ակտերի հարկադիր կատարման ոլորտում իրականացվող հարկադիր աճուրդների անցկացման կարգը:

Հասարակական հարաբերությունների զարգացմանը գուգրնեաց անհրաժեշտ է քարեփիտումներ կատարել և կատարելագործել նաև հրապարակային սակարգությունների ոլորտը կանոնակարգող օրենսդրությունը: Այս տեսանկյունից անհրաժեշտ եմ համարում ոլորտում ինչպես նոր իրավական ակտերի ընդունումը, այնպես էլ գործող իրավական ակտերի համապատասխանեցումը առկա իրավահարաբերություններին:

Ներկայումս, խիստ կարևոր եմ համարում հրապարակային սակարգությունների ոլորտը կանոնակարգող օրենսդրության և հատկապես “Հրապարակային սակարգությունների մասին” ՀՀ օրենքի դրույթների լուսաբանումը, ինչպես գործարար շրջանակներին, այնպես էլ լայն հասարակայնությանը: Այդ տեսանկյունից ողջունելի է սույն ձեռնարկի հրապարակումը, որը բավականին մատչելի և ընկալելի ձևով մատուցում է “Հրապարակային սակարգությունների մասին” ՀՀ օրենքի կարգավորման առարկան, սակարգությունների միջոցով պայմանագրեր կնքելու պայմանները, օրենքը խսխույր համար պատասխանատվությունը և սակարգությունների մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները:

Տիգրան Մուկուչյան
ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Տ. ՄՈՒԿՈՒՉՅԱՆ



Սույն ձեռնարկը նպատակ է հետապնդում հանրությանը մատչելի ձևով իրազեկել «Հրապարակային սակարգությունների մասին» ՀՀ օրենքի կարգավորման առարկան և պարզ հարց ու պատասխանի մեթոդով լուսաբանել նշված օրենքով կարգավորվող առավել կարևոր իրավահարաբերությունները:

Հրապարակային սակարգությունների բնագավառը կարգավորվում է մի շարք օրենքներով ու այլ իրավական ակտերով, որոնք սահմանում են որոշակի ոլորտներում իրականացվող հրապարակային սակարգությունների անցկացման կարգն ու պայմանները: Մինչև «Հրապարակային սակարգությունների մասին» ՀՀ օրենքի ընդունումը բնագավառում կային բազմաթիվ չկարգավորված հարաբերություններ: Օրենքը լրացրեց այդ բացը և տվեց շատ հարցերի պատասխաններ:

Ձեռնարկը, բացի հիշյալ օրենքի առանձին դրույթների ներկայացումից, հղումներ է տալիս նաև այն օրենքներին ու իրավական ակտերին, որոնցով կարգավորվում են տվյալ օրենքի կարգավորման առարկա չհանդիսացող հարաբերությունները:

Հարց ու պատասխանի մեթոդը, որը կիրառված է ձեռնարկում, այն մատչելի է դարձնում նաև հրապարակային սակարգությունների բնագավառին առնչվող ոչ մասնագետների համար:

Նման նախաձեռնություններն անշուշտ ողջունելի են և կնպաստեն չայաստանում իրավական բարեփոխումների զարգացմանն ու հասարակության իրավագիտակացության բարձրացմանը:

Արշակ Ալավերդյան

Հայաստանի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավաբանների ասոցիացիայի նախագահ

A handwritten signature in black ink, appearing to read "ԱՐՇԱԿ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ".

ԲՈՎԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախարան.....	7
1. Ե՞րբ է ընդունվել Օրենքը.....	8
2.Ի՞նչ է հրապարակային սակարգությունը	8
3. Ե՞րբ է կիրառվում հրապարակային սակարգությունը	9
4. Ինչպիսի՞ հավահարաբերություններ է կարգավորում հրապարակային սակարգությունների մասին օրենքը.....	11
5. Ինչպիսի՞ հրավահարաբերություններ չի կարգավորում հրապարակային սակարգությունների մասին օրենքը.....	11
6. Ի՞նչ է հրապարակային սակարգությունը՝ ըստ օրենքի.....	13
7. Որո՞նք են հրապարակային սակարգությունների անցկացման ձևերը..	14
8. Ի՞նչ է հարկադիր աճուրդը	14
9. Ի՞նչ է ընդհանուր աճուրդը	14
10. Որո՞նք են աճուրդի ձևերը	15
11. Ի՞նչ է լուսը.....	16
12. Ովքե՞ր կարող են հանդիսանալ հրապարակային սակարգությունների կազմակերպիչ	17
13. Ի՞նչ դրույքներ պետք է պարունակի աճուրդի անցկացման մասին պայմանագիրը	18
14. Ինչպե՞ս է իրականացվում աճուրդի կազմակերպչի վարձատրությունը	18
15. Ովքե՞ր կարող են մասնակցել հրապարակային սակարգություններին. 19	19
16. Ովքե՞ր չեն կարող են մասնակցել հրապարակային սակարգություններին.....	19
17. Որո՞նք են աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ պայմանները	19
18. Որո՞նք են աճուրդի կազմակերպման հիմնական ընթացակարգային պայմանները	21
19. Ինչպիսի՞ տեղեկություններ պետք է պարունակի աճուրդի մասին հրապարակային ծանուցումը.....	21
20. Ի՞նչ կարգով են կատարվում աճուրդի մասին հրապարակային ծանուցման փոփոխությունները և լրացումները	22
21. Ինչպե՞ս է իրականացվում հայտարարված աճուրդից հրաժարվելը	23
22. Ինչպիսի՞ ընթացակարգ ունի աճուրդը.....	24
23. Ի՞նչ տեղեկություններ է պարունակում աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը.....	25
24. Ե՞րբ և ինչպե՞ս է կատարվում լուսի գնի վճարումը.....	26
25. Ե՞րբ է աճուրդը համարվում չկայացած.....	27
26. Ե՞րբ է աճուրդը համարվում անվավեր	27

27. Որո՞նք են հարկադիր ածուրդի առանձնահատկությունները 28
28.Ի՞նչ կարգով է կատարվում լոտի զնահատումը հարկադիր ածուրդի ժամանակ 28
29.Ինչպե՞ս է կազմակերպվում հարկադիր ածուրդը 29
30.Ի՞նչ առանձնահատկություն ունի հարկադիր ածուրդի ընթացքը 30
31. Որո՞նք են մրցույթի ձևավորման հրականացվող հրապարակային սակարգությունների առանձնահատկությունները 31
32. Ինչպե՞ս և ո՞վ է սահմանում մրցույթի ձևերը 31
33. Ինչպիսի՞ն պետք է լինի մրցույթի անցկացման մասին պայմանագիրը 32
34. Ինչպե՞ս է կատարվում մրցույթի մասին հրապարակային ժանուցումը. 32
35. Ե՞րբ և ինչպե՞ս է կատարվում մրցույթի մասին հրապարակային ժանուցման փոփոխությունները 33
36. Ինչպե՞ս է ձևավորվում և ի՞նչ գործառույթներ է իրականացնում մրցութային հանձնաժողովը 33
37. Ինչպիսի՞ն է մրցույթի հայտեր ներկայացնելու կարգը 34
38. Ի՞նչ կարգով է կատարվում մրցույթի հայտերի քացումը և արդյունքների ամփոփումը 35
39. Ե՞րբ է մրցույթը համարվում չկայացած կամ անվավեր 36
40. Ի՞նչ պատասխանատվություն է կրում սակարգությունների կազմակերպիչը 37
41. Ո՞վ և որքա՞ն ժամանակ է պահպանում հրապարակային սակարգությունների առնչվող փաստարդուրը 38

Նախարան

Ո՞րն է այս ձեռնարկի նպատակը

Անհերքելի է, որ իրավական ակտերի կիրառումն ապահովելու ամենակարևոր պայմաններից մեկը նոր ընդունված ակտերի իրագեկումն է: Այս ձեռնարկի նպատակն էլ հենց “Հրապարակային սակարգությունների մասին” ՀՀ օրենքի մասին մատչելի տեղեկություն ներկայացնելն է: Իրավական տեղեկատվության մատչելիությունը կարելի է ապահովել տարրեր եղանակներով: Կոնկրետ իրավական ակտի վերաբերյալ հարցուաստաժանը այդ եղանակներից մեկն է և այս ձեռնարկի համար ընտրվել է հենց այդ ձևը:

Այս ձեռնարկը պատրաստվել է հիմնականում նրանց համար, ովքեր իրապարակային սակարգությունների մասին հիմնարար գիտելիքներ չունեն: Ձեռնարկում փորձ է արվել հնարավորին չափ պարզ և մատչելի ձևով ներկայացնել օրենքի հիմնական դրույթները: Բնական է, որ այս գրքույկի նպատակը չէ մանրամասն անդրադարձ և վերլուծել օրենքի բոլոր դրույթներն ու պահանջները, ուստի խորհուրդ է տրվում “Հրապարակային սակարգությունների մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների վերաբերյալ առավել ստույգ և մանրամասն տեղեկություններ կամ պարզաբնույթներ ստանայու համար դիմել համապատասխան մասնագետների օգնությանը և/կամ ուսումնասիրել համապատասխան իրավական ակտերն ամբողջությամբ (ցանկայի է օգտվել պաշտոնական տարրերակներից):

Սիամամանակ ուզում ենք Ձեզ տեղեկացնել, որ այս գրքույկը կլինի իրապարակային սակարգություններին առնչվող առաջին, բայց ոչ վերջին նյութը. մենք մտադիր ենք որոշ ժամանակ անց իրապարակել ավելի ընդարձակ և գործնական ձեռնարկ իրապարակային սակարգությունների վերաբերյալ: Սակայն, այդ մտադրությունը կիրականան միայն այն դեպքում, եթե այս գրքույկի ընթերցողներից ստանանք առաջարկություններ, առարկություններ և դիտողություններ, որոնք հետագայում կուտումնափրկեն, կհամադրվեն և հիմք կհանդիսանան այս թեման ընդլայնելու և ավելի

օգտակար, գործնական ու հետաքրքիր ձեռնարկ հրապարակելու համար: Ասոյի խնդրում ենք բոլոր այն անձանց, ովքեր կունենան առաջարկություններ և դիստրիբյուններ այս գորույկի վերաբերյալ, դրանք ուղարկել մեզ գրքույկի վերջին էջում նշված՝ մեր գունվելու վայրի կամ էլեկտրոնային հասցեով: Մենք պատրաստ ենք համագործակցությամբ: Նախապես շնորհակալ ենք:

1.Ե՞րբ է ընդունվել օրենքը

“Հրապարակային սակարգությունների մասին” Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենքն ընդունվել է 2003 թ. նոյեմբերի 8-ին, ՀՀ նախագահի կողմից ստորագրվել է նոյեմբերի 4-ին, հրապարակվել է նոյեմբերի 12-ին (ՀՀ պաշտոնական տեղեկագիր, 2003 թ., թիվ 56 (291)) և ուժի մեջ է մտել 2003 թ. նոյեմբերի 22-ից:

2.Ի՞նչ է հրապարակային սակարգությունը

Հրապարակային սակարգությունը գույքի կամ գույքային իրավունքների օտարման ձև է, ինչպես օրինակ ուղարկի վաճառքն է կամ նվիրատվությունը:

Հրապարակային սակարգության նախն ընդհանուր դրույթները սահմանված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 463 հոդվածում (“Պայմանագրի կնքելը սակարգություններով”):

Ծատերի պատկերացմամբ հրապարակային սակարգությունը պարզ մի ընթացակարգ է, ուր մասնակիցները առաջարկում են վաճառքի հանված ապրանքի՝ իրենց գինը, և հաղթում է առավել բարձր գին առաջարկողը: Իրականում հրապարակային սակարգությունը ընդհանրապես, իսկ աճուրդը մասնավորապես, այնքան էլ պարզ մեխանիզմ չէ, ինչպես որ թվում է առաջին հայացքից: Թեև աճուրդ տերմինը թե հայերենում և թե լատիներենում (*auction*՝ լատիներեն - ած) ունի “ած” արմատը, այն իրական չէ, քանի որ միշտ չէ, որ աճուրդի ներկայացված ապրանքի վաճառքի գինը ավելանում է:

Վերջերս մասուլում՝ մասնավորապես Հայաստանի Հանարապետություն օրաբերքում, հաճախակի կարելի է հանդիպել Երևանի քաղաքապետարանի պետական սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալության և օտարնան մրցույթային ու աճուրդային հանձնաժողովի հայտարարությունը՝ Երևանի տարբեր համայնքներում գտնվող առանձին հողամասերի աճուրդային վաճառքի մասին։ Նման հայտարարություններ են հրապարակվում նաև հանայնքների հողերի օտարումը կազմակերպող և իրականացնող աճուրդային հանձնաժողովները՝ հանայնքային սեփականություն հանդիսացող հողերի աճուրդային վաճառքի վերաբերյալ։ Սա վկայությունն է այն իրողության, որ հրապարակային սակարկությունները թեև դժվարությամբ և դանդաղորեն, սակայն աստիճանաբար մտնում են մեր ամենօրյա իրականության մեջ և այդ երևույթի մասին ավելի մանրամասն տեղեկությունները դառնում են անհրաժեշտություն։ Այսպիսով, Ձեր ձեռքին գտնվող գրքույթի հիմնական նպատակն էլ հրապարակային սակարկություն կոչվող երևույթի վերաբերյալ տեղեկության պահանջի բավարարումն է՝ մեր հնարավորության և հմտության սահմաններում։



3. Ե՞րբ է կիրառվում հրապարակային սակարկությունը

ՀՀ օրենսդրությամբ սահմանված են մի շարք դեպքեր, երբ գույքի կամ գույքային իրավունքի օտարման դեպքում պարտադիր պետք է ընտրվի հրապարակային սակարկության ձևը։ Այս պահանջը ամրագրված է ՀՀ քաղաքացիական օրենսդրություն 463 հոդվածում (“Պայմանագրի կնքելը սակարկություններով”), որը բառացիորեն այսպես է սահմանում. “Սույն օրենսդրում կամ այլ օրենքում նշված

դեպքերում գույքը կամ գույքային իրավունքը վաճառելու մասին պայմանագրերը կարող են կնքվել միայն սակարկությունների միջոցով:

Այսպիսով՝ ո՞ր դեպքերում է գույքի վաճառքը իրականացվում հրապարակային սակարկության միջոցով:

➤ Իրավաբանական անձի լուծարում

Եթե իրավաբանական անձը գտնվում է լուծարման գործընթացում և նրա դրամական միջոցներն անբավարար են պարտատերերի պահանջները բավարարելու համար, ապա լուծարման հանձնաժողովը այդ իրավաբանական անձի գույքը պետք է վաճառի իրավաբանակային սակարկություններով՝ հրապարակային սակարկությունների մասին օրենքով սահմանված կարգով (ՀՀ քաղաքացիական օրենսգիրը, հոդված 69. “Իրավաբանական անձի լուծարման կարգը”):

➤ Գրավ դրված գույքի վաճառք

Բացառությամբ որոշ դեպքերի, հրապարակային սակարկությունների միջոցով պետք է իրացվի գրավ դրված գույքը (ՀՀ քաղաքացիական օրենսգիրը, հոդված 250):

➤ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցի բաժնեմասի բնազանձումը և իրացումը

“Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին” ՀՀ օրենքի 20-րդ հոդվածը սահմանում է, որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՍՊԸ) մասնակցի պարտքերը մարելու համար՝ նրա այլ գույքի անբավարարության դեպքում՝ պարտատերերի պահանջով և դատարանի վճռի հիման վրա ՍՊԸ մասնակցի բաժնեմասի վրա կարող է բռնազանձում տարածվել: Նույն հոդվածի համաձայն՝ եթե ընկերության մյուս մասնակից(ներ)ը կամ ընկերությունը սահմանված ժամկետում չեն օգտվում պարտատեր մասնակցի բաժնեմասը ձեռք բերելու իրավունքից, ապա բաժնեմասի վրա

բռնազանձման տարածումն իրականացվում է բաժնեմասը հրապարակային սակարկություններով վաճառելու միջոցով:

Բացի վերը նշված դեպքերից, ՀՀ օրենսդրությամբ սահմանաված են նաև այլ դեպքեր, երբ գույքը պետք է վաճառվի հրապարակային սակարկությունների միջոցով (օրինակ, գրավատնից շպահանջված գույքի իրացումը, սահմանված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 847 հոդվածով, կամ՝ պետության սեփականություն հանդիսացող հոդամասերի վաճառքը, սահմանված ՀՀ հոդային օրենսգրքի 67 հոդվածով):

**4. Ինչպիսի՞ իավահարաբերություններ է կարգավորում
հրապարակային սակարկությունների մասին օրենքը**

Հրապարակային սակարկությունների մասին օրենքը կարգավորում է հրապարակային աճուրդների միջոցով գույքի (ինչպես նաև գույքային իրավունքների, մտավոր գործունեության արդյունքների) և դրանց նկատմամբ իրավունքների իրացման, ինչպես նաև հրապարակային մրցույթների իրականացման հետ կապված հարաբերությունները:

**5. Ինչպիսի՞ իրավահարաբերություններ չի կարգավորում
հրապարակային սակարկությունների մասին օրենքը**

Հրապարակային սակարկությունների մասին օրենքը չի տարածվում՝

**1. Փակ սակարկությունների կազմակերպման հետ կապված
հարաբերությունների վրա:**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 464 հոդվածի համաձայն՝ փակ սակարկություններին մասնակցում են միայն այդ նպատակով հրավիրված անձինք: Փակ սակարկությունների անցկացման բնագավառում մրցույթի ձևով կազմակերպվող սակարկությունները գնումների հետ կապված հարաբերություններում կարգավորվում են “Գնումների մասին” ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 07.11.2002 թվականի թիվ 1755-Ն որոշմամբ հաստատված “Փակ մրցույթով գնումների իրականացման կարգով”:

2. Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) ընթացքում սակարգությունների կազմակերպման, ինչպես նաև պետության և համայնքների կարիքների համար իրականացվող գնումների հետ կապված հարաբերությունների վրա, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Պետական գույքի մասնավորեցման ընթացքում սակարգությունների կազմակերպման կարգը սահմանված է “Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին”ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 1998 թվականի թիվ 387 որոշմամբ հաստատված “Պետական գույքի աճուրդով մասնավորեցման կարգով” և ՀՀ կառավարության 1998 թվականի թիվ 669 որոշմամբ հաստատված “Մրցույթով (այդ թվում միջազգային մրցույթով) պետական գույքի մասնավորեցման կարգով”:

Պետության և համայնքների կարիքների համար իրականացվող գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են “Գնումների մասին”ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2001 թվականի թիվ 1267 որոշմամբ:

3. Արտարժույթի հրապարակային վաճառքի հետ կապված հարաբերությունների վրա:

Արտարժույթի հրապարակային վաճառքն իրականացվում է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի թիվ 69 որոշմամբ սահմանած կարգով:

4. Ֆոնդային և ապրանքային բորսաների միջոցով հրապարակային սակարգությունների կազմակերպման վրա, ինչպես նաև արժեթղթերի հրապարակային վաճառքի հետ կապված հարաբերությունների վրա, բացառությամբ հարկադիր աճուրդների կազմակերպման դեպքերի:

Վերը նշված հարաբերությունները ևս ներկայումս կարգավորվում են ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի թիվ 69 որոշմամբ սահմանած կարգով:

5. Էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարգությունների վրա:

Հարկ է նշել, որ չնայած օրենքը նախատեսում է սակարգությունների կազմակերպում էլեկտրոնային համակարգերի միջոցով, սակայն ՀՀ-ում ներկայումս նման սակարգությունների կազմակերպումը դեռևս որևէ իրավական ակտով կարգավորված չէ և կարելի է ասել, որ գործնականում նման սակարգություններ չեն կազմակերպվում:

Ի լրումն վերը նշվածների պետք է ավելացնել նաև հետևյալ 2 դեպքերը՝

- “Հրապարակային սակարգությունների մասին” ՀՀ օրենքի համաձայն, իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերների անվճարունակության (սնանկության) առնչությամբ կազմակերպվող իրավարակային սակարգությունների առանձնահատկությունները սահմանվում են օրենքով: Ներկայումս սնանկության ընթացքում աճուրդի կարգի առանձնահատկությունները սահմանվում են “Անվճարունակության (Սնանկության) մասին” ՀՀ օրենքով (ընդունված 2003 թ. դեկտեմբերի 17-ին) և «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով (ընդունված 2001 թ. նոյեմբերի 6-ին):
- ՀՀ հողային օրենսգրքով (ընդունված 2001 թ. մայիսի 2-ին) սահմանվում է, որ պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողամասերն օտարվում են նաև աճուրդով: Պետության և համայնքների սեփականությունը հանդիսացող հողամասերի աճուրդի կազմակերպման և իրականացման կարգը, ինչպես նաև այդ հողամասերը մրցույթով վարձակալության տրամադրելու պայմաններն ու կարգը սահմանվում է հողային օրենսգրքով:

6. Ի՞նչ է իրապարակային սակարգությունը՝ ըստ օրենքի

Հստ “Հրապարակային սակարկությունների մասին” ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ հրապարակային սակարկությունը աճուրդի կամ մրցույթի կազմակերպման միջոցով պայմանագրերի կնքման գործնքաց է, որին կարող են մասնակցել նույն օրենքով նախատեսված պայմաններին բավարարող անձանց անորոշ շրջանակ:

7. Օրո՞նք են հրապարակային սակարկությունների անցկացման ձևերը

Օրենքը սահմանում է սակարկությունների 2 տեսակ/ձև՝

աճուրդ՝ սակարկությունների ձև, որի ընթացքում հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որն առաջարկել է առավել բարձր գին.

մրցույթ՝ սակարկությունների ձև, որի ընթացքում հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որը մրցութային հանձնաժողովի եզրակացությամբ առաջարկել է լավագույն պայմանները.¹

8. Ի՞նչ է հարկադիր աճուրդը

Հարկադիր աճուրդ է այն աճուրդը, որն անցկացվում է կատարողական թերթին համապատասխան, ասել է թե՝ դատական ակտի (վճիռ կամ դատավճիռ) հիման վրա:

Հարկադիր աճուրդը կազմակերպվում և անցկացվում է դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության մարմինների կողմից :

9. Ի՞նչ է ընդհանուր աճուրդը

¹ Մրցույթին առնչվող դրույթներն ավելի մանրամասն լուսաբանվում են 31-39 հարցերի պատասխաններում:

² Հարկադիր աճուրդի առանձնահատկություններն ընդգրկված են 27-30 հարցերի պատասխաններում:

Ընդհանուր աճուրդ է համարվում այն աճուրդը, որի ընթացքում վաճառվում է մեկից ավելի լոտ:

Ընդհանուր աճուրդի ժամանակ կազմակերպիչը պարտավոր է պահպանել ծանուցման մեջ նշված լոտերի վաճառքի հերթականությունը:

10. Օրո՞նք են աճուրդի ձևերը

Ընդհանրապես գոյություն ունեն աճուրդի մի քանի ձևեր, որոնցից ամենտարածվածն են դասականը և հողանդականը:

Դասական

Այս ձևը երբեմն կոչվում է նաև անգիտական աճուրդ: Դասական աճուրդի ժամանակ ապրանքի մեկնարկային գինը սահմանվում է ապրանքի գնից ակնհայտ ցածր: Սակարկությունների ժամանակ գնելու ցանկություն ունեցողները առաջարկում են այն գինը, որով իրենք պատրաստ են գնել ապրանքը և այս կարգով աճուրդի հանված ապրանքի գինը սկսում է աստիճանաբար աճել: Այն անձը, ով ամենավերջինն է ցանկություն հայտնում գնել ապրանքը, դրանով փաստորեն առաջարկելով ամենաբարձր գինը, դառնում է գնորդ:

Հողանդական

Այս ձևով աճուրդի կազմակերպման ժամանակ մեկնարկային գինը սահմանվում է ապրանքի գնից ակնհայտ բարձր: Սակարկությունների ժամանակ այն աստիճանաբար իջեցվում է կազմակերպչի կողմից: Այն անձը, ով առաջինն է հայտնում իր ցանկությունը գնել ապրանքը այդ պահին հայտարարված գնով, դառնում է գնորդ:

“Հրապարակային սակարկությունների մասի” ՀՀ օրենքով, ըստ էության, նախատեսված են միայն դասական ձևով աճուրդի անցկացման կանոնները (տես հողվածներ 14, 16 և 33):

Աճուրդի փաստացի անցկացման ձևը, ինչպես նաև օրենքով շնախատեսված ընթացակարգային այլ պայմանները սահմանվում են աճուրդի կանոնակարգով՝ աճուրդի կազմակերպչի կողմից:

Աճուրդն սկսելու պահից 30 (երեսուն) րոպե առաջ կազմակերպիչը պարտավոր է հնարավորություն ընձեռել մասնակիցներին ծանոթանալու աճուրդի կանոնակարգին՝ մասնակիցների համար հասանելի տեղում կանոնակարգը փակցնելու միջոցով:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության 2004 թվականի հուլիսի 8-ի թիվ 172 հրամանով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի դրույթներին և “Հրապարակային սակարգությունների մասին” ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն հաստատվել է “Աճուրդի անցկացման կանոնակարգը”, որով կարգավորվում է կազմակերպչի (ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության) կողմից հրապարակային աճուրդների միջոցով գույքի, գույքային իրավունքների, մտավոր գործունեության արդյունքների և դրանց նկատմամբ իրավունքների իրացման գործունեությունը: Նշված կանոնակարգը չի տարածվում պետական գույքի մասնավորեցման ընթացքում աճուրդների հետ կապված հարաբերությունների վրա: Այդ կանոնակարգով սահմանվում են նաև աճուրդի ձևերը՝ դասական և հոլադական:

11. Ի՞նչ է լուսը

Սովորաբար լուսն այն գույքն է կամ իրավունքը, որն առաջարկվում է վաճառքի՝ աճուրդով կամ մրցույթով: Լուսը կարող է լինել նաև կատարման ենթակա աշխատանք կամ մատուցման ենթակա ծառայություն:

Լուսը պետք է ունենա համապատասխան նկարագրություն, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ տվյալներ: Աճուրդի դեպքում լուսը պետք է ունենա նաև նաև նաև մեկնարկային գին:

Լուսի ուսումնասիրումը

Նախքան աճուրդի բացումը, մասնակիցները պետք է հնարավորություն ունենան ծանոթանալ աճուրդի մասին ծանուցման մեջ նշված վաճառվելիք լուսին (լուսերին):

Լուսն ուսումնասիրելու կարգն ու ժամկետները սահմանվում են աճուրդի կանոնակարգով՝ հաշվի առնելով շարժական գույքի պահվելու կամ անշարժ գույքի գտնվելու վայրը:

Աճուրդի կազմակերպիչը ծանուցման պահից պարտավոր է հնարավորություն ընձեռել լոտի (լոտերի) ուսումնասիրման համար:

Անշարժ գույքի գննության անհրաժեշտության դեպքում, ինչպես նաև այլ տեղերում պահվող շարժական գույքի ուսումնասիրման համար աճուրդի կազմակերպիչը պարտավոր է նախատեսել համապատասխան օրեր և ժամեր՝ գույքի ուսումնասիրման համար, ինչպես նաև պարտավոր է նշված ժամանակահատվածում ապահովել լոտի (լոտերի) ամբողջական ուսումնասիրման հնարավորությունը ցանկացողների համար:

Օրենքով սահմանված է լոտի (լոտերի) ուսումնասիրման համար ընդիհանուր ժամաքանակ. անշարժ գույքի համար այն չի կարող պակաս լինել 40 (քառասուն) ժամից, իսկ շարժական գույքի համար՝ 10 (տասը) ժամից:

Այն դեպքում, եթե վաճառվող լոտն իրավունք է, ապա “Հրապարակային սակարկությունների մասին” ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացողներին պետք է հնարավորություն տրվի ուսումնասիրելու համապատասխան օբյեկտը, որի նկատմամբ գոյություն ունի այդ իրավունքը, ինչպես նաև համապատասխան իրավահաստատող փաստաթղթերը:

12. Ուժե՞՞ր կարող են հանդիսանալ հրապարակայիհն սակարկությունների կազմակերպիչ

Հրապարակային սակարկություններ կարող է կազմակերպել ինչպես գույքի սեփականատերը, գույքային իրավունքների տիրապետողը, այնպես էլ պայմանագրով կամ օրենքով հրապարակային սակարկություններ կազմակերպելու լիազորություններով օժտված անձը կամ մարմինը:

Եթե գույքի սեփականատերն ինքն անձամբ չէ իրականացնում սակարկությունը, այսինքն հրապարակային սակարկության կազմակերպիչը գույքի սեփականատերը չէ, ապա այս դեպքում գույքի սեփականատերը համարվում է հրապարակային սակարկությունների առաջարկող:

Եթե հրապարակային սակարկությունն անցկացվելու է սեփականատեր կամ իրավունքի տիրապետող չհամարվող անձի կողմից, ապա նրա և առաջարկողի միջև կնքվում է մրցույթի անցկացման մասին գրավոր պայմանագիր:

13. Ի՞նչ դրույթներ պետք է պարունակի աճուրդի անցկացման մասին պայմանագիրը

Աճուրդի անցկացման մասին պայմանագիրը պետք է ներառի՝

- առաջարկողի և կազմակերպիչի անունները (անվանումները) և գտնվելու վայրերը (բնակության վայրերը).
- աճուրդին ներկայացվելիք լոտի անվանումը.
- լոտի մեկնարկային գինը.
- օրենքով նախատեսված այլ դրույթներ:

Եթե կազմակերպիչը լիազորված է նվազեցնելու լոտի մեկնարկային գինը, ապա աճուրդ անցկացնելու մասին պայմանագիրը պետք է պարունակի նաև համապատասխան դրույթներ՝ նշելով մեկնարկային գինը նվազեցնելու բույլատրելի սահմանները:

Լոտը կազմակերպչին ի պահ հանձնելու դեպքում պայմանագիրը պետք է պարունակի նաև պահատվությանը վերաբերող դրույթներ:

14. Ինչպես է իրականացվում աճուրդի կազմակերպչի վարձատրությունը

Կազմակերպչի կողմից աճուրդի կազմակերպման դեպքում կազմակերպչի վարձատրության կարգը և պայմանները սահմանվում են աճուրդի անցկացման մասին պայմանագրով:

Լուծարվող իրավաբանական անձի գույքի վաճառքի դեպքում վարձատրության շափր առաջարկողի և աճուրդի կազմակերպչի միջև կնքված պայմանագրով չի կարող գերազանցել վաճառվող գույքի մեկնարկային գնի 10 (տասը) տոկոսը:

15. Ովքե՞ր կարող են մասնակցել հրապարակային սակարգություններին

Սակարկությունների մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքները:

Հրապարակային սակարկությունների մասնակից դառնալու համար անհրաժեշտ է վճարել սահմանված նախավճարը, դրանով իսկ ցանկություն հայտնելով մասնակցելու հրապարակային սակարկություններին և կնքելու համապատասխան պայմանագիր՝ օրենքով սահմանված կարգով:

16. Ովքե՞ր չեն կարող են մասնակցել հրապարակային սակարգություններին

Սակարկություններին չեն կարող մասնակցել՝

- սակարկությունների կազմակերպիչը, իրավաբանական անձ համարվող կազմակերպչի հիմնադիրները (մասնակիցները), կազմակերպչի աշխատակիցները (իսկ մրցույթների դեպքում՝ նաև մրցութային հանձնաժողովի անդամները), աճուրդավարի երեխաները, ծնողները, ամուսինը, տատը, պապը, եղբայրները և քույրերը, ինչպես նաև աճուրդավարի ամուսնու ծնողները, տատը, պապը, եղբայրները և քույրերը:
- այն անձինք, ովքեր սակարկություններով վաճառվող լոտի նկատմամբ չեն կարող ունենալ սեփականության իրավունք:

17. Որո՞նք են աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ պայմանները

Նախավճար

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք, աճուրդի մասին ծանուցման մեջ սահմանված չափով, ժամկետներում և կարգով, մուծում են նախավճար, որի չափը չի կարող գերազանցել աճուրդում վաճառվող ամենաբարձր մեկնարկային գին ունեցող լրտի գնի մինչև 5 (հինգ) տոկոսը:

Նախավճարը մուծվում է աճուրդի կազմակերպչին: Նախավճարը կարող է վճարվել կանխիկ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Աճուրդի մասնակցի վկայական

Նախավճարը վճարվելու դեպքում աճուրդի կազմակերպիչը պարտավոր է մասնակցին տրամադրել մասնակցի վկայական, որտեղ նշվում է աճուրդի կազմակերպչի անվանումը, վճարված նախավճարի չափը, աճուրդի անցկացման վայրը (հասցեն) և ժամանակը:

Աճուրդի դիտորդ մասնակից

Աճուրդի մասնակից չհամարվող անձանց համար աճուրդի կանոնակարգով կարող է սահմանվել մուտքի վճար, որի չափը չի կարող գերազանցել սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկը:

Աճուրդի մասնակիցներին մասնակցի վկայականներ տրամադրելը, ինչպես նաև աճուրդի մասնակից չհամարվող անձանց տոմսերի վաճառքը պետք է դադարի աճուրդի բացումից առնվազն 30 (երեսուն) րոպե առաջ, եթե աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ այլ ժամկետ սահմանված չէ:

Տեղական վճար

Եթե աճուրդը կամ մրցույթը անցկացվում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, ապա մասնակիցների համար կարող է սահմանվել նաև տեղական վճար՝ որևէ նաև կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման նպատակով: Տեղական վճարի դրույքաշափը համայնքի ղեկավարի ներկայացնամբ սահմանում է համայնքի ավագանին՝ տվյալ գործողությունն իրականացնելու համար անհրաժեշտ

նվազագույն ծախսերի չափով:

**18. Որո՞նք են աճուրդի կազմակերպման հիմնական
ընթացակարգային պայմանները**

Աճուրդի անցկացման ժամանակը

Աճուրդը պետք է սկսվի ժամը 09.00-ից մինչև 19.00 ընկած ժամանակահատվածում, բացառությամբ սեփականատիրող (իրավատիրոջ) կողմից կազմակերպվող աճուրդների, որոնք պետք է սկսվեն ժամը 08.00-ից մինչև 23.00 ընկած ժամանակահատվածում:

Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը

Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը պետք է կատարվի զանգվածային լրատվության միջոցով կամ էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ:

Աճուրդի կազմակերպիչը պետք է աճուրդի կայացման վայրում ցուցատախտակի վրա գետեղի աճուրդի մասին հրապարակային ծանուցումը՝ աճուրդի կայացման օրվանից առնվազն մեկ օր առաջ:

**19. Ինչպիսի՞ տեղեկություններ պետք է պարունակի աճուրդի
մասին հրապարակային ծանուցումը**

- Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը պետք է պարունակի աճուրդի մասին հետևյալ տեղեկությունները.
 1. աճուրդի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը և ժամը.
 2. աճուրդի կազմակերպչի անունը (անվանումը).
 3. աճուրդի կազմակերպման վայրը (հասցեն).
 4. աճուրդի ձևը և անցկացման կարգը.
 5. աճուրդի պայմանները, այդ թվում՝ լոտի (լոտերի) անվանումը, լոտի նկատմամբ սահմանափակումները, եթե լոտն առարկա է, այս նրա ֆիզիկական վիճակը (մաշվածությունը) և (կամ) արտադրման տարեքիվը, լոտի մեկնարկային գինը, լոտի իրավունք լինելու դեպքում՝ այդ իրավունքի գործողության ժամկետը, ինչպես նաև այլ էական պայմանները.

6. աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը.
7. աճուրդում հաղորդին որոշելու կարգը.
8. կազմակերպչի կողմից սահմանված նախավճարի չափը, ինչպես նաև վճարման կարգը և ժամկետները.
9. լուս ուսումնասիրելու ամսաթիվը, ժամանակը և վայրը.
10. ընդհանուր աճուրդի դեպքում՝ լուսերի վաճառքի հերթականությունը.
11. աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը և կանոնակարգի պատճեննը տրամադրելու կարգը:

Ընդ որում՝ աճուրդի կանոնակարգը տրամադրելու համար կազմակերպիչը կարող է պահանջել միայն կանոնակարգի պատճենահանման համար կատարած ծախսերը և ոչ ավելին:

- Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը պետք է կատարվի աճուրդի բացումից առնվազն 15 (տասնինգ) օր առաջ:
- Անշարժ գույքի վաճառքի, ինչպես նաև որոշակի այլ դեպքերում օրենքով կարող են սահմանվել աճուրդի մասին հրապարակային ծանուցման առավել երկար ժամկետներ:

20. Ի՞նչ կարգով են կատարվում աճուրդի մասին հրապարակային ծանուցման փոփոխությունները և լրացումները

Այս պայմանները և տեղեկությունները, որոնք նշվել են աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ, ենթակա չեն փոփոխման, բացառությամբ այն դեպքերի, երբ փոփոխություններ են տեղի ունեցել աճուրդով վաճառվելիք լոտի նկատմամբ սահմանափակումների մասով կամ փոփոխություններ են տեղի ունեցել՝ կապված լոտի ֆիզիկական վիճակի հետ, կամ էլ այն դեպքում՝ երբ աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ փոփոխությունների հմարավորությունը նախատեսվել է:

Աճուրդի պայմանների և տեղեկությունների փոփոխման համար վերոհիշյալ իիմքերի առկայության դեպքում աճուրդի կազմակերպիչը պարտավոր է այդ փոփոխությունները և լրացումները կատարել և այդ

մասին ծանուցել աճուրդի օրվանից առնվազն 3 (երեք) օր առաջ: Ընդ որում՝ այդ փոփոխությունների կրացումների մասին հրապարակային ծանուցումը պետք է կատարվի այն ձևով, ինչպես որ կատարվել էր աճուրդի մասին հրապարակային ծանուցումը:

Եթե հրապարակային ծանուցման փոփոխությունը կատարվել է օրենքով սահմանված կարգի խախտումով, ապա աճուրդի կազմակերպիչը կրում է մասնակիցների կրած իրական վճասների ռիսկը:

Աճուրդի մասին հրապարակային ծանուցում կատարելուց հետո թույլատրվում է հրապարակային ծանուցման փոփոխությամբ կատարել ցանկացած լրացում, եթե դրանով չեն փոփոխվում աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված էական պայմանները:

21. Ինչպե՞ս է իրականացվում հայտարարված աճուրդից հրաժարվելը

Աճուրդից հրաժարվելու դեպքում պետք է այդ մասին ծանուցումը արվի այնպես, ինչպես կատարվել էր աճուրդի մասին հրապարակային ծանուցումը:

Եթե հրաժարվելը կատարվում է աճուրդի բացմանը նախորդող 3 (երեք) օրվա ընթացքում, ապա աճուրդի կազմակերպիչը պարտավոր է հատուցել մասնակիցների կրած իրական վճասը:

Սեփականատիրոջ (իրավատիրոջ) մեղքով աճուրդից հրաժարվելու հետևանքով կրած վճասները կազմակերպիչը կարող է վերականգնել հետադարձ պահանջի կարգով:

Կազմակերպիչն այստավոր է աճուրդից հրաժարվել հետևյալ դեպքերում՝

- երբ առկա է սեփականատիրոջ (իրավատիրոջ) գրավոր դիմումն աճուրդից հրաժարվելու վերաբերյալ (եթե աճուրդի անցկացման մասին պայմանագրով այլ բան նախատեսված չէ)։
- երբ լուսը կամ դրա մի մասը ներառված է սնանկության (անվճարունակության) հետևանքով լուծարվող իրավաբանական

անձի կամ անվճարունակ ճանաչված ֆիզիկական անձի գույքի կազմում.

- Եթե առկա է դատարանի որոշումը լոտի վաճառքի սահմանափակման վերաբերյալ:

Կազմակերպիչը կարող է աճուրդից հրաժարվել հետևյալ դեպքերում՝

- Եթե աճուրդի մասին պայմանագրով սահմանված կարգով ու չափով չի վճարվել նախատեսված վարձատրությունը.
- Եթե լոտի ուսումնասիրելու համար խոչընդոտներ են ստեղծվում:

22. Ինչպիսի՞ ընթացակարգ ունի աճուրդը

Աճուրդի ընթացքը կարելի է բաժանել հետևյալ փուլերի.

➤ Գրանցում

Նախքան աճուրդի սկսվելը կազմակերպիչը գրանցում է աճուրդի մասնակիցներին՝ ստուգելով նրանց ինքնությունը, լիազորությունները հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված այլ փաստաթղթեր:

➤ Աճուրդի բացում

Աճուրդը բացվում է հայտարարությամբ: Հայտարարության մեջ նշվում է աճուրդում վաճառվելիք լոտի անվանումը և նկարագրությունը, որա մեկնարկային գինը, լոտի նկատմամբ սահմանափակումները, ինչպես նաև աճուրդի անցկացման ձևը, այդ թվում՝ գնային հայտեր ներկայացնելու կարգը:

➤ Աճուրդի առաջարկ և սակարկություն

Աճուրդավարը հայտարարում է մեկնարկային գինը և մասնակիցներին առաջարկում է ներկայացնել գնային հայտը: Այսպիսով՝ սկսվում է բուն աճուրդը, որի ընթացքում ցանկացած մասնակից իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուրճիկի երրորդ հարկածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ նվազագույն հավելման չափով: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ

հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Այն դեպքում, եթե մի քանի մասնակից միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդավարը հաղթող մասնակցին որոշում է վիճակահանուրյան միջոցով:

➤ Ավարտ

Լոտի (լոտերի) վաճառքից հետո հաղթողը և կազմակերպիչը ստորագրում են սակարկությունների արդյունքների մասին արձանագրությունը, և տվյալ լոտի վերաբերյալ աճուրդը համարվում է ավարտված:

Օրենքով սահմանվում է, որ աճուրդի մասին կանոնակարգով կարող են նախատեսվել աճուրդի անցկացման այլ ընթացակարգային պայմանները: Այդ առանձնահատկությունների մասին կազմակերպիչը պարտավոր է մասնակիցներին ծանոթացնել նախքան աճուրդի սկսվելը:

23. Ի՞նչ տեղեկություններ է պարունակում աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը

Աճուրդի արդյունքների մասին կազմվում է արձանագրություն, որի մեջ նշվում են՝

- աճուրդի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը և ժամանակը.
- լոտի անվանումը, լոտի վերաբերյալ իրավունքներն ու պարտականությունները և այլ սահմանափակումներ, ինչպես նաև լոտի վիճակը (արտադրության տարին, ֆիզիկական մաշվածության աստիճանը և այլն).
- լոտի մեկնարկային գինը.
- աճուրդի կազմակերպչի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը.
- հաղթող ճանաչված մասնակցի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը.
- լոտի գնման գինը:

Աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցը և աճուրդի կազմակերպիչը աճուրդի արդյունքների մասին արձանագրությունն ստորագրում են աճուրդն անցկացնելու օրը:

Եթե հաղթող ճանաչված մասնակիցն արձանագրության վերաբերյալ առարկություններ ունի, ապա դրանք նշվում են արձանագրության մեջ:

Ընդհանուր աճուրդի դեպքում արձանագրությունը կարող է կազմվել սակարգությունների ընթացքում: Լուս աճուրդում վաճառելուց հետո տվյալ լոտի նկատմամբ հաղթող ճանաչված մասնակիցը հրավիրվում է արձանագրությունն ստորագրելու:

24. Ե՞րբ և ինչպես է կատարվում լոտի գնի վճարումը

Եթե աճուրդի մասին հրապարակային ծանուցմամբ, աճուրդի արդյունքների մասին արձանագրությամբ կամ պայմանագրով այլ ժամկետ սահմանված չէ, ապա աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցը պարտավոր է վճարել լոտի գինը աճուրդի արդյունքների մասին արձանագրությունն ստորագրելու օրվանից 10 (տասն) օրվա ընթացքում՝ հաշվանցելով մուծված նախավճարի գումարը:

Եթե աճուրդում գրյացած գինը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի հիմնապատիկի չափը, վճարումը կատարվում է աճուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրման օրը:

Հատուկ ուշադրության է արժանի օրենքով սահմանված այն դրույթը, ըստ որի՝ լոտի գնման գնի վճարման պարտավորությունը հաշվանցման ենթակա չէ:

Եթե աճուրդի կազմակերպիչը գույքի սեփականատերը չէ, ապա լոտի գինը փոխանցվում է սեփականատիրոջը (իրավատիրոջը՝ աճուրդի կազմակերպման մասին պայմանագրին համապատասխան հաշվանցելով կատարված ծախսերը):

Աճուրդի կազմակերպիչը աճուրդում չհաղթած մասնակիցներին նախավճարը վերադարձնում է՝ աճուրդը կայանալուց կամ չկայացած

հայտարարվելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում, եթե օրենքով այլ ժամկետ նախատեսված չէ:

25. Ե՞րբ է աճուրդը համարվում չկայացած

Աճուրդը համարվում է չկայացած հետևյալ դեպքերում՝

- Եթե լուսը չի վաճառվում (ներառյալ ոչ մի գնորդ չներկայանալու դեպքում)
- Եթե հաղթող ճանաչված անձը և(կամ) աճուրդի կազմակերպիչը հրաժարվում է սակարկությունների արդյունքների մասին արձանագրությունն ստորագրելուց:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 464-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սակարկություններում հաղթած անձը սակարկությունների արդյունքների մասին արձանագրությունն ստորագրելուց խուսափելու դեպքում կորցնում է մուծած նախավճարը:

Աճուրդը չկայացած համարվելու դեպքում հաջորդ աճուրդի պայմանները, այդ բվում՝ մեկնարկային գինը, կարող են փոփոխվել:

Նոր աճուրդը կազմակերպվում և անցկացվում է սահմանված ընդիանուր կարգով:

26. Ե՞րբ է աճուրդը համարվում անվավեր

Աճուրդն անվավեր կարող է ճանաչվել միայն դատական կարգով:

Ծահագրիո անձի պահանջով, դատարանը կարող է անվավեր ճանաչել օրենքի առանձին հոդվածներով նախատեսված կանոնների խախտմամբ անցկացված աճուրդը:

Աճուրդն անվավեր ճանաչելը հանգեցնում է դրանում հաղթած անձի հետ կնքված պայմանագրի անվավերության:

Աճուրդն անվավեր ճանաչելու դեպքում նոր աճուրդը կազմակերպվում և անցկացվում է օրենքով սահմանված կարգով: Նոր աճուրդի պայմանները կարող են փոփոխվել, եթե աճուրդի անվավերությունը կապված է եղել նախնական որևէ պայմանի հետ, ինչպես նաև եթե տեղի է ունեցել լոտի վիճակի փոփոխություն, այդ թվում՝ կապված դրա վերաբերյալ իրավունքների և պարտականությունների փոփոխման հետ:

27. Որո՞նք են հարկադիր աճուրդի առանձնահատկությունները

Ինչպես արդեն նշվեց, հարկադիր աճուրդն անցկացվում է դատական ակտեր հարկադիր կատարման ծառայության մարմինների կողմից՝ ի կատարումն դատական ակտի հիման վրա տրված կատարողական քերթի: Այս տեսակի աճուրդների առանձնահատկություններից ելնելով՝ “Հրապարակային սակարկությունների մասին” ՀՀ օրենքում հարկադիր աճուրդներին վերաբերող դրույթները սահմանված են առանձին գլուխ (գլուխ 4):

Հարկադիր աճուրդի լոտ կարող է դառնալ ցանկացած շարժական կամ անշարժ գույք, այդ թվում՝ գույքային իրավունքներ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Եթե հարկադիր աճուրդի լոտը շուտ փչացող գույք է կամ սակավարժեք (սահմանված նվազագույն աշխատավարձի հիմնապատիկի չափը չգերազանցող) ապա այն կարող է իրացվել նաև առևտրային կազմակերպությունների միջոցով՝ պայմանագրային հիմունքներով:

28. Ի՞նչ կարգով է կատարվում լոտի գնահատումը հարկադիր աճուրդի ժամանակ

Որպես կանոն՝ հարկադիր աճուրդով վաճառքի ենթակա լոտի մեկնարկային գինը սահմանվում է կատարողական թերթի կատարման օրը գործող շուկայական գնի 75 տոկոսի չափով: Այս կանոնից բացառություններ կարող են սահմանվել միայն ՀՀ օրենսդրությամբ:

Հարկադիր աճուրդով վաճառվող լոտի մեկնարկային գինը որոշելու համար հարկադիր կատարողը, ինչպես նաև պահանջատերը կամ պարտապանը, իրավունք ունեն նշանակել փորձագետ: Ընդ որում՝ պահանջատերը իրավունք ունի նաև ողջամիտ սահմաններում որոշելու բռնագանձված գույքից լոտում ընդգրկվող գույքի կազմը և քանակը:

29. Ինչպե՞ս է կազմակերպվում հարկադիր աճուրդը

Հարկադիր աճուրդին մասնակցելու ցանկություն հայտնած անձինք աճուրդի մասին հրապարակային ծանուցման պահից մինչև աճուրդի անցկացման նախորդ օրվա ժամը 16.00 հայտ են ներկայացնում ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության ստորաբաժանում: Հայտին կից ներկայացվում է նաև համապատասխան փաստաթուղթ՝ հայտով նախատեսված լոտի մեկնարկային գնի 5 (հինգ) տոկոսի չափով ծառայության ստորաբաժանման դրամարկղ կամ դեպոզիտ հաշվին նախավճար մուծելու մասին:

Հարկադիր աճուրդի մասնակիցների մասին տեղեկությունները հրապարակման ենթակա չեն:

Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած մասնակցի կանխիկ մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդի ավարտվելուց անմիջապես հետո, իսկ ծառայության դեպոզիտ հաշվին փոխանցվածը՝ 3 (երեք) բանկային օրվա ընթացքում:

Աճուրդի չկայանալու դեպքում՝ 3 (երեք) օրվա ընթացքում նախավճարը ենթակա է վերադարձման:

Լոտի գննման, պահպանության, գնահատման (այդ բվում՝ փորձագետի միջոցով), ծառայության շինությունների պահպանման, սակարկությունների կազմակերպման ու անցկացման այլ ծախսերն իրականացվում են իրացվող լոտի գնման գնի 5 (հինգ) տոկոսի, իսկ սահմանված նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկից ավելի արժողությամբ լոտի դեպքում՝ գնման գնի 3 (երեք) տոկոսի չափով՝ պարտապանից գանձվող գումարների հաշվին:

**30. Ի՞նչ առանձնահատկություն ունի հարկադիր աճուրդի
ընթացքը**

Հարկադիր աճուրդի մասնակիցների համար, ելնելով լոտի մեկնարկային գնից, սահմանվում են մեկնարկային գնի նվազագույն հավելման հետևյալ չափերը.

1. լոտի մեկնարկային գնի մինչև 50.000 դրամի դեպքում նվազագույն հավելման չափ չի սահմանվում.
2. լոտի մեկնարկային գնի 50.001-100.000 դրամի դեպքում՝ 500 դրամ.
3. լոտի մեկնարկային գնի 100.001-500.000 դրամի դեպքում՝ 1.000 դրամ.
4. լոտի մեկնարկային գնի 500.001-1.000.000 դրամի դեպքում՝ 10.000 դրամ.
5. լոտի մեկնարկային գնի 1.000.001-10.000.000 դրամի դեպքում՝ 50.000 դրամ.
6. լոտի մեկնարկային գնի 10.000.000-ից ավելի դեպքում՝ 100.000 դրամ:

Աճուրդում հաղթած մասնակիցը և հարկադիր կատարողն աճուրդն անցկացնելու օրը ստորագրում են դրա արդյունքների վերաբերյալ արձանագրությունը:

Եթե աճուրդում հաղթած մասնակիցը հրաժարվում է արձանագրությունն ստորագրելուց, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը:

Եթե հարկադիր կատարողը չի ստորագրում արձանագրությունը, ապա աճուրդում հաղթած մասնակիցին 3 (երեք) բանկային օրվա ընթացքում վերադարձվում է նախավճարի կրկնապատիկը, ինչպես նաև հատուցվում են աճուրդին մասնակցելու հետևանքով նրա կրած վճարները:

Աճուրդում հաղթած մասնակիցը պարտավոր է աճուրդն անցկացնելու օրվանից 3 (երեք) բանկային օրվա ընթացքում հարկադիր կատարման ժառայության ստորաբաժանման դրամարկղ կամ

դեպողիտ հաշվին մուծել լոտի գնման գինը՝ հաշվանցելով նախօրոք մուծած նախավճարը: Գնման գինը չմուծելու դեպքում նախավճարը չի վերադարձվում և մնում է հարկադիր կատարման ժառայոթյան դեպողիտ հաշվում:

Աճուրդում հաղթած մասնակցի կողմից գնման գինը ծառայության ստորաբաժնման դրամարկղ կամ դեպողիտ հաշվին մուծելուց հետո՝ ենորյա ժամկետում, հարկադիր կատարողը նրա հետ կնքում է առուվաճառքի պայմանագիր:

Լոտի վաճառքից ստացված գումարը հանձնվում կամ փոխանցվում է պարտատիրոջը 3 (երեք) օրվա ընթացքում:

Հարկադիր աճուրդի առանձնահատկություններին առավել հանգմանալից (մասնավորապես՝ դրանց անվավերության կամ կրկնակի իրականացման մասրանասներին) կարելի է ծանոթանալ “Հրապարակային սակարկությունների մասին”ՀՀ օրենքի համապատասխան հոդվածներում :

31. Որո՞՞նք են մրցույթի ձևով իրականացվող հրապարակային սակարկությունների առանձնահատկությունները

Այնպես ինչպես հարկադիր աճուրդների պարագայում, մրցույթի ձևով իրականացվող հրապարակային սակարկությունների առանձնահատկություններից ելնելով՝ “Հրապարակային սակարկությունների մասին”ՀՀ օրենքում մրցույթներին վերաբերող դրույթները սահմանված են առանձին գլխով (գլուխ 3): Մրցույթի ձևով իրականացվող սակարկությունները ունեն այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսին են, մասնավորապես, մրցույթի ձևերը, մրցութային հանձնաժողովի կազմավորումը և գործառույթները, մրցույթի ընթացակարգը և մրցույթի արդյունքների ամփոփումը, և այլն:

32. Ինչպե՞ս և ո՞վ է սահմանում մրցույթի ձևերը

Մրցույթի անցկացման որոշակի ձևը, ինչպես նաև այն պայմանները, որոնք “Հրապարակային սակարկությունների մասին”ՀՀ օրենքով

նախատեսված չեն, սահմանվում են մրցույթի կանոնակարգով՝ մրցույթի կազմակերպչի կողմից: Ընդ որում՝ մրցույթի մասին հրապարակային ծանուցման պահից մրցույթի կազմակերպիչը պարտավոր է հնարավորություն ընձեռել, որ ցանկացողները ծանորանամ մրցույթի կանոնակարգին, ինչպես նաև պարտավոր է նրանց տրամադրել կանոնակարգի պատճենը՝ օրենքով նախատեսված կարգով:

33. Ինչպիսի՞ն պետք է լինի մրցույթի անցկացման մասին պայմանագիրը

Այնպես ինչպես աճուրդի դեպքում, մրցույթի դեպքում ևս, եթե այն անցկացմելու է կազմակերպիչը, ապա առաջարկողի և մրցույթի կազմակերպչի միջև կնքվում է մրցույթի անցկացման մասին գրավոր պայմանագիր: Այդ պայմանագիրը պետք է ներառի՝

1. առաջարկողի և կազմակերպչի անունները (անվանումները) և գտնվելու վայրը (քնակության վայրը).
2. նշում այն մասին, թե ում անունից պետք է հանդես գա մրցույթի կազմակերպիչը.
3. մրցույթում առաջարկվող լոտի նկարագրությունը և (կամ) մրցույթի պլայմանները.
4. կազմակերպչի վարձատրության չափը և վճարման կարգը, բացառությամբ անվճար մրցույթներ անցկացնելու դեպքերի:

Մրցույթի մասին պայմանագրից բխող պարտավորությունների կատարումը կարող է ապահովել գրավով, տուժանքով, նախավճարով և այլ միջոցներով:

34. Ինչպես է կատարվում մրցույթի մասին հրապարակային ծանուցումը

Որպես կանոն՝ մրցույթի անցկացման մասին հրապարակային ծանուցումը կատարում է մրցույթի կազմակերպիչը՝ մրցույթն սկսվելուց առնվազն 30 (երեսուն) օր առաջ: Այս կանոնից բացառություններ կարող են նախատեսվել միայն ՀՀ օրենսդրությամբ:

Մրցույթի մասին հրապարակային ծանուցումը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

1. մրցույթի կազմակերպչի անունը (անվանումը).
2. մրցույթի կազմակերպման վայրը (հասցեն).
3. մրցույթի հայտերի ընդունման ժամանակահատվածը՝ նշելով ժամերմ ըստ օրերի.
4. մրցույթի ձևը և անցկացնելու կարգը.
5. մրցույթի լոտի նկարագրությունը (անվանումը), մրցույթի պայմանները.
6. մրցույթին մասնակցելու անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը.
7. մրցույթում հաղթողին որոշելու կարգը.
8. մրցույթին մասնակցելու նախավճարի չափը, ինչպես նաև վճարելու կարգը և ժամկետները.
9. մրցույթում ծածկագրեր կիրառելու կարգը.
10. մրցույթի հայտերը բացելու, ինչպես նաև մրցույթի հայտերն ամփոփելու նիստերի օրը և ժամը.
11. մրցույթի կանոնակարգին ծանոթանալու վայրը և կանոնակարգի պատճենը տրամադրելու կարգը:

Մրցույթի կանոնակարգը տրամադրելու համար լրացուցիչ վճար չի նախատեսվում՝ բացի կազմակերպչի կողմից դրա պատճենահանման համար կատարած ծախսերը:

**35. Ե՞րբ և ինչպե՞ս է կատարվում մրցույթի մասին
հրապարակային ծանուցման փոփոխությունները**

Մրցույթի պայմանների փոփոխման դեպքում կազմակերպիչը պարտավոր է անհապաղ կատարել մրցույթի մասին հրապարակային ծանուցման համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ: Ընդ որում՝ փոփոխության մասին ծանուցումը պետք է կատարվի նույն ձևով, ինչպես կատարվել էր մրցույթի մասին հրապարակային ծանուցումը:

**36. Ինչպե՞ս է ձևավորվում և ի՞նչ գործառույթներ է
իրականացնում մրցութային հանձնաժողովը**

Մրցութային հանձնաժողով ձևավորում է մրցույթի կազմակերպիչը՝ նախքան մրցույթի մասին ծանուցումը հրապարակելը:
Հանձնաժողովը պետք է ունենա առնվազն երեք անդամ:

Մրցութային հանձնաժողովն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1. հաստատում է մրցույթի մասին հրապարակային ծանուցման տեքստը,
2. բացում և գնահատում է մրցույթի հայտերը,
3. որոշում է մրցույթի հաղթողին:

Մրցութային հանձնաժողովի գործունեության ընթացակարգը սահմանվում մրցույթի կանոնակարգով:

Մրցութային հանձնաժողովը որոշումներ է ընդունում ձայների պարզ մեծանասնությամբ, եթե մրցույթի կանոնակարգով այլ կարգ չի սահմանվում:

37. Ինչպիսի՞ն է մրցույթի հայտեր ներկայացնելու կարգը

Այն անձինք, ովքեր ցանկություն ունեն մասնակցել մրցույթին, պետք է մրցույթի կազմակերպիչն ներկայացնեն մրցույթի հայտերը՝ մրցույթի մասին հրապարակային ծանուցման պահանջներին համապատասխան:

Մրցույթի հայտում ներառվող տեղեկությունների և փաստաթղթերի ցանկը մրցույթի մասին հրապարակային ծանուցման տվյալների հիման վրա սահմանվում է մրցույթի կանոնակարգով:

Մրցույթի հայտերը ներկայացնում են սոսնձված, կնքված և (կամ) ստորագրված ծրարով:

Ծրարում ներառված փաստաթղթերը պետք է կազմված լինեն բնօրինակից և մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ

նշված թվով կրկնօրինակներից, որոնց վրա համապատասխանաբար գրվում են «քննօրինակ» և «կրկնօրինակ» բառերը:

Մրցույթի հայտը գրանցվում է առանձին գրանցամատյանում, ըստ ստացման հերթականության, ծրարի վրա նշելով գրանցման համարը, տարին, ամիսը, ամսաթիվը և ժամը:

Կազմակերպիչը մասնակցին տալիս է տեղեկանք՝ մրցույթի հայտն ընդունելու նաև:

Եթե մրցույթի հայտերը չեն համապատասխանում օրենքի պահանջներին կամ ներկայացվել են ժամկետը լրանալուց հետո, ապա դրանք առանց բացվելու մերժվում են և վերադարձվում ներկայացնողին:

Մրցույթի մասնակիցները, մինչև մրցույթի հայտերը ներկայացնելու վերջնական ժամկետի ավարտը, կարող են փոփոխել կամ հետ վերցնել հայտերը՝ սահմանված կարգով:

Մրցույթին նաև կարող է ցանկացողները կարող են մրցույթի հայտերը կազմակերպչին ուղարկել պատվիրված նամակով:

Մրցույթին նաև կարող է ցանկացողները պարտավոր են մուծել նախավճար՝ հրապարակային ծանուցմամբ նախատեսված կարգով, չափով և ժամկետներում:

38. Ի՞նչ կարգով է կատարվում մրցույթի հայտերի բացումը և արդյունքների ամփոփումը

Մրցույթի հայտերը բացվում են մրցութային հանձնաժողովի հատուկ նիստում՝ մրցույթի մասին հրապարակային ծանուցմամբ նախատեսված օրը և ժամին:

Մրցույթի հայտերի բացման նիստում հրապարակվում են՝

1. մրցույթի հայտը ներկայացրած յուրաքանչյուր անձի ծածկանունը, իսկ եթե տվյալ անձը չի առարկում, ապա նաև՝ նրա անունը (անվանումը).
2. մրցույթի հայտեր ներկայացնելու համապատասխանությունը սույն օրենքի և մրցույթի մասին հրապարակային ծանուցման պահանջներին.
3. ամփոփ տվյալներ՝ մրցույթի հայտերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

Մրցույթի մասնակիցներոն և նրանց ներկայացուցիչները իրավունք ունեն՝

- մասնակցել մրցույթի հայտերի բացման, ինչպես նաև մրցույթի հայտերի ամփոփման նիստերին:
- ծանոթանալ մրցույթի նիստերի արձանագրություններին՝ մրցույթի կանոնակարգով նախատեսված կարգով:

Մրցույթի հայտերն ամփոփելու օրը մրցութային հանձնաժողովը կազմում է մրցույթի արդյունքների մասին արձանագրություն, որտեղ նշում է՝

1. մրցույթի հայտերի բացման, ինչպես նաև մրցույթի հայտերի ամփոփման վայրը, ամսաթիվը և ժամը, ինչպես նաև մրցութային հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.
2. մրցույթի մասնակիցների անունները (անվանումները) և գտնվելու (բնակության) վայրը.
3. տեղեկություններ՝ մրցույթի հայտերի վերաբերյալ հարցումների և դրանց պատասխանների մասին.
4. մրցույթում հաղթողի անունը (անվանումը).
5. այլ անհրաժեշտ տեղեկություններ:

Մրցույթի արդյունքներն ամփոփելու և մրցույթում հաղթողին ճանաչելու օրը կազմակերպիչը և մրցույթի հաղթող ճանաչված մասնակիցը ստորագրում են մրցույթի արդյունքների մասին արձանագրությունը:

39. Ե՞րբ է մրցույթը համարվում չկայացած կամ անվավեր

Մրցութային հանձնաժողովը մրցույթը ճանաչում է չկայացած այն դեպքում, եթե՝

1. ոչ մի հայտ չի ներկայացվել.
2. ներկայացված հայտերից ոչ մեկը չի համապատասխանում մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված պահանջներին, ինչպես նաև, եթե հայտեր ներկայացնելը չի համապատասխանել սույն օրենքի և մրցույթի մասին հրապարակային ծանուցման պահանջներին.
3. արտակարգ իրավիճակների պատճառով անհնար է դառնում մրցույթով նախատեսված աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումը:

Մրցույթը դատական կարգով կարող է ճանաչվել անվավեր, եթե այն իրականացվել է օրենքով սահմանված պահանջների խախտմամբ:

Մրցույթն անվավեր ճանաչելը հանգեցնում է մրցույթի արդյունքների հիման վրա կնքված պայմանագրի անվավերությանը:

40. Ի՞նչ պատասխանատվություն է կրում սակարգությունների կազմակերպիչը


Սակարկությունների կազմակերպիչը պատասխանատվություն է կրում լրտի այն թերությունների համար, որոնց մասին տեղյակ է եղել կամ պետք է տեղյակ լիներ, սակայն չի զգուշացրել սակարկությունների մասնակիցներին:

Սակարկությունների կազմակերպիչը պատասխանատվություն է կրում իր տիրապետման տակ գտնվող լրտի վճասվածքների համար և կրում է լրտի պատահական կրոստի ռիսկը, եթե սակարկությունների կազմակերպման մասին պայմանագրով այլ բան սահմանված չէ:

Սակարկությունների կազմակերպիչը պարտավոր է ապահովել լրտերի պահպանումը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված սանիտարական և այլ պարտադիր նորմերին համապատասխան:

**41. Ո՞վ և որքա՞ն ժամանակ է պահպանում հրապարակային
սակարգությունների առնչվող փաստաթղթերը**

Հրապարակային սակարգությունների վերաբերյալ փաստաթղթային գրառումներ վարելու և աճուրդի հետ կապված փաստաթղթերը (պայմանագրերը, արձանագրությունները և այլն) պահպանելու պարտականությունը կրում է սակարգությունների կազմակերպիչը: Փաստաթղթերի պահպանման ժամկետը երեք տարի է:



.....
.....
.....
.....
.....
.....
.....
.....
.....
.....
.....
.....
.....
.....
.....
.....
.....
.....
.....
.....
.....

Ի՞նչ է հրապարակային սակարգությունը

այս և հարակից այլ հարցերի պատասխանները կստանաք՝

ընթերցելով ներկայացվող գրքույթը



USAID
FROM THE AMERICAN PEOPLE



USAID/ARMENIA COMMERCIAL LAW AND ECONOMIC REGULATION PROGRAM

ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության

Առևտուրային Իրավունքի և Տնտեսական Կարգավորման Ծրագիր

Հայաստանի Հանրապետություն, Երևան 375002, Կոն. 1/16, Հեռ. 52 56 01, 52 56 05, Ֆաք. 54

18 15, Էլ. Փոստ clerp@netsys.am

(այս գրքույթին առնչվող հարցերի հետ կապված՝ նաև arsnazaryan@netsys.am)

**Հայաստանի պետական և տեղական
ինքնակառավարման մարմինների
իրավաբանների ասոցիացիա**

Հայաստանի Հանրապետություն, Երևան 375010, Հանրապետության Հրապարակ,

Սինոքյունների տուն, 3-րդ հարկ, սենյակ 48, հեռ/ֆաք 52 22 92

Էլ. Փոստ petiravasoc@netsys.am.